

ՀՆԴԿԱՅԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Ա. ՄԵԼԵՈՒՄՅԱՆ

Ազգային առաջընթացի, առավել ևս ազգային-ազատագրական խնդիրներ ունեցող ժողովրդի համար կարևոր է ճանաչել ազգային բնավորության գծերը: Պակաս կարևոր չեն նաև ազգի հավաքական բնավորության մեջ նկատվող ձևախելումների պատճառների ճանաչումը և դրանց հաղթահարման ուղիների բացահայտումը: Դա հնարավորություն կտա մշակելու ճիշտ, գիտականորեն հիմնավորված ազգային մարտավարություն: Հարցն ունի ոչ թե հոետորական, այլ ավելի շուտ գիտագործնական խորքային բովանդակություն:

Հայտնի է, որ ազգի հավաքական բնութագիրը գոյանում է նաև նրա անդամների պատմականորեն ձևավորված բնավորության գծերից: Սոցիալական մեծ սուբյեկտի՝ ազգի ճակատագրի գործում դա կարևոր գործոններից է: Տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ կարգի հարցեր լուծելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ ազգի էթնոմշակութային ստերեոտիպի հանգամանքը: Յուրաքանչյուր ազգի ինքնատիպությունը, ավելի լայն՝ ազգային կեցությունը, պայմանավորված է ոչ միայն բնակլիմայական, սոցիալական, տրնտեսական և այլ կարգի գործոններով, այլև ազգային բնավորությամբ ու խառնվածքով: Պատմականորեն ազգային տիպական գծերի ու պատկերացումների կրկնելիությունը հանգեցրել է այս կամ այն ժողովրդի մասին որոշակի ստերեոտիպի մշակմանը: Էթնոմշակութային ստերեոտիպը այս կամ այն ազգին բնութագրող տիպական գծերի մասին ընդհանրացված պատկերացումների համակարգն է: Այսպես, իտալացիների մեջ առանձնացնում են տաքարյունությունը, անգլիացիների մեջ՝ սառնասրտությունը, ֆինների մեջ՝ համառությունը, հայերի մեջ՝ հյուրասիրությունը և այլն: Սովորաբար առանձնացնում են ստերեոտիպի երկու տեսակ.

1. **Ինքնաստերեոտիպ.** թե ինչ են մտածում տվյալ ազգի մարդիկ սեփական ազգի մասին,

2. **հետերիոստերեոտիպ.** թե ինչ են մտածում այս կամ ազգի ներկայացուցիչները այլ ազգերի մասին:

Ինքնաստերեոտիպը կազմում է ազգային ինքնագիտակցության կարևոր տարրը: Այստեղ իշխում է այն մտայնությունը, թե քանի որ «ազգը այսպիսին է, ապա ես ևս պետք է լինեմ այդպիսին»: Այստեղ դրականն այն է, որ այս ճանապարհով բարձրանում է ժողովրդի ազգային ոգին, ինքնագիտակցությունը: Մակայն այն կարող է ունենալ նաև ոչ դրական հետևանքներ և սեփական ապրելակերպի թերությունների ինքնաարդարացման պատճառ դառնալ¹:

Այս իմաստով, կարևոր է այն հարցի պարզաբանումը, թե ինչպիսին է ազգի մեջ ինքնաստերեոտիպի և հետերիոստերեոտիպի իրական վիճակը պատմական այս կամ այն դարաշրջանում²: Այստեղ կարելի է առանձնացնել երկու մակարդակ.

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Մելքոնյան, Մշակութաբանություն, Եր., 2001, էջ 33-37:

² Հայ ազգին օտարների կողմից տրված գնահատականների մասին տե՛ս, օրինակ, Լ. Միրզոյան, Մոնտեսերյոն Հայաստանի և հայերի մասին, «Նորք», 1989, թ. 7:

առօրյա-գիտակցական և տեսական-վերացական: Առօրյա-գիտակցական մակարդակում ազգին պատկանող սուբյեկտները, որպես կանոն, իրենց վերագրում են գծեր, որոնք շահեկանորեն դրական են համարվում տվյալ ազգի ազգային բնութագրի մեջ: Տեսական-վերացական մակարդակում գործ ունենք տվյալ դարաշրջանի մտածողների գիտական վերլուծությունների հետ:

Հնդկահայ լուսավորիչները ևս անդրադարձել են ազգային նկարագրի, ազգի բնավորության գծերի ու խառնվածքի հարցերին, որը, ըստ նրանց, կարևոր է ազգային խնդիրներ լուծելու, ազատագրական պայքարի մարտավարությունն ու ռազմավարությունը մշակելու գործում: Ընդ որում, հնդկահայ լուսավորիչները, մի կողմից վկայակոչելով հարուստ պատմական անցյալը, շեշտադրում են հայ ազգի այն գծերը, որոնք պատմականորեն հատուկ են եղել նրան՝ լինելով երկրի հզորության ու բարգավաճման պատճառ ու արդյունք, մյուս կողմից նկատում են պատմական փոփոխվող պայմաններից ու սոցիալ-տնտեսական, քաղաքական հանգամանքներից թելադրված բնավորության գծեր, որոնք այլ գործոնների հետ միասին՝ կարող են ճակատագրական լինել ազգի ապագայի համար: Հ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Ծ. Ծահամիրյանը այս հարցերը կապում էին ազգային-ազատագրական խնդիրների հետ, դրանց տալիս լուսավորական մտածողությանը հատուկ բացատրություններ: Միաժամանակ, այս հարցերին անդրադառնալը նրանց համար ժամանակավրեպ չէր, այլ կապված էր ազգային-ազատագրական գաղափարախոսության սեփական մոդելի մշակման հետ:

Ազգային գաղափարախոսության մշակման գործում այլևայլ գործոնների շարքում կարևոր է ազգային բնավորության, ազգի հոգեկան կերտվածքի հաշվառումը, համապատասխան մշակութային միջավայրի առկայությունը:

Ազգի բնավորության գծերը և հոգեկան կերտվածքը ձևավորող գործոններից մեկն է պատմական ճակատագիրը: Ահա թե ինչու պատմական տարբեր դարաշրջաններում նույն ազգը կարող է ցուցաբերել բնավորության և հոգեկան կերտվածքի տարբեր, երբեմն նույնիսկ՝ հակադիր գծեր: «Անցյալի ուսումնասիրությունը ցույց է տալիս, - գրում է Լ. Խորշոդյանը, - որ շատ ժողովուրդներ պատմության անբարենպաստ զարգացման պայմաններում, հատկապես երբ կորցնում են անկախությունը և երկարատև ժամանակահատված գտնվում ուրիշ ժողովուրդների տիրապետության տակ, մանավանդ եթե նվաճողն էլ քաղաքակրթության ցածր մակարդակի վրա է գտնվում, սկսում են կորցնել տարբեր չափերով ու խորությամբ իրենց ազգային բնավորության ավանդական գծերը և աստիճանաբար փոխել հոգեկան կերտվածքը»³: Ուշագրավ է, որ Հովսեփ Էմինը 18-րդ դարում, հենվելով անձնական դիտարկումների վրա, այն միտքն է հայտնում, որ «Երբ ազգ մը նուաճման կենթարկուի, անպայման կերպով մը անոր միտքը կենթարկուի նուաճման»: Ահա թե ինչու, ժամանակավրեպ չի կարելի համարել հնդկահայ լուսավորիչների հորդոր-կոչն այն մասին, որ հայ երիտասարդները ծանոթանան իրենց քաջ ու իմաստուն նախնիների գործունեությանն ու հայ ազգի հերոսական վառ էջերին:

Ծ. Ծահամիրյանը հայ ազգին վերագրում է առանձնաշնորհներ, որոնք, որպես բացառիկության պատիվ, տրված են Աստծու կողմից: Նախ՝ նա պատահական չի համարում, որ արարիչը «հաճեցավ միակ արդար ու սիրելի մարդուն՝ նախահայր Նոյին իջեցնել Մասիս լեռան վրա և իր օրհնությունը տալ Նախիջևան գավառին ու Արարատի երկրին»⁴: Երկրորդ՝ հետադարձ հայացք գցելով պատմական անցյալի վրա՝ նա պատահական չի համարում, որ «առաջին արիությունն ու քաջությունը կամապաշտ ինքնակալության դեմ ցույց տվեց մեր նախնին՝

³ Լ. Խորշոդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 2001, էջ 18-19:

⁴ «Յովսեփ Էմինի կենսքն ու արկածները», Եր., 1999, էջ 216:

⁵ Ծ. Ծահամիրյան, Որոգայթ փառաց, թարգմ. Պ. Խաչատրյանի, Եր., 2002, էջ 9:

քաջագանգուր, հաստաբազուկ և գորությամբ հզոր Հայկը»։ Օ. Շահամիրյանը մատնանշում է նաև հայ ազգի մեծությունը, «բուրաստանի մմանվող Հայոց աշխարհի առատությունը՝ ամեն բարիքներով լի, առողջակազմ որդեծնությունը»։ Մեծագոր հարստությունն է համարում այն, որ «մարդիկ հաստատուն են իրենց դավանած հավատին և սեփական աշխարհի հետ կապված են սիրով»⁶։

Հնդկահայ լուսավորիչները հայ ազգի ավանդաբար բնորոշ գծերից մեկը համարում են աշխատասիրությունը։ Այդ մասին են վկայում նաև օտարների կողմից հայերին տրված գնահատականները, որոնցից մեկը իր ինքնակենսագրական գրքում մեջբերում է Էմիլը։ Ռուսական կայսրուհի Եկատերինա 2-րդը համեմատելով հայերին վրացիների հետ, նշում է, որ «հայերն իբր աշխատութեան ընդունակ ազգ, բոլորովին տարբեր անսիրտ ու դավաճան վրացիներէն, կրնային լուսագոյն յաջողիլ և դառնալ ազատ ու բարգավաճ ազգ մը»⁷։ Էմիլը դրանով ոչ թե շեշտում է երկու հարևան ազգերին օտարի տված գնահատականը, այլև հայ ազգի հոգևոր կերտվածքի մեջ ընդգծում է նրա հատկանիշներից մեկը՝ աշխատասիրությունը։ Հայերի աշխատասիրության, աշխատանքով իրենց կյանքը շենացնելու մասին խոսել է նաև Մոնտեսքյուն։ «Պարսկական նամակներ»-ում ֆրանսիացի լուսավորիչը, անդրադառնալով այն հարցին, որ Շահ Սուլեյմանի նախարարներից շատերը փորձում էին ստիպել պարսկահայերին կամ հեռանալ երկրից, կամ էլ ընդունել մահմեդականությունը, հանգում է այն եզրակացության, որ դա կունենար անկանխատեսելի հետևանքներ և կնշանակեր պարսկական կայսրության վերջը։ «Համոզված եմ, - պարսիկ երիտասարդ Ուզբեկի բերանով ասում է Մոնտեսքյուն, - որ մեծ Շահ Աբասը կնախընտրեր կտրել իր երկու ձեռքերը, քան կստորագրեր այդպիսի հրամանագիր, և որ իր ամենաաշխատասեր (ընդգծումն իմն է - Գ. Մ.) հպատակներին Մեծ Մոգոլի և այլ հնդիկ թագավորների մոտ վտարելու փոխարեն կնախընտրեր նրանց տալ իր տիրույթների կեսը»⁸։ Ինչպես Հ. Էմիլը, այնպես էլ Մ. Բաղրամյանն ու Օ. Շահամիրյանը հայ ազգային կեցության, նրա բնավորության ու խառնվածքի տիպական գծերից են համարում նաև պարկեշտությունը, պատվականությունը և բարեսրտությունը, որոնք դարեր շարունակ ուղեկցել են նրան և ընդունվել օտարների կողմից։ Այսպես, Օ. Շահամիրյանը գրում է, թե «Բաղրամբարտ այս ազգը ի սկզբանե մինչև օրս հյուրընկալության այնքան ամուր սովորույթ ունի, որ դա ինձ ստիպում է հավատալ, որ այդ շնորհը...ավանդվեց միմիայն հայերին, որպեսզի մարդկությունը ճանաչի առանձնապես սրանց որդեգրությունը»⁹։

Երրորդ, ոչ պակաս կարևոր գիծը հնդկահայ լուսավորիչները համարում էին քաջությունը։ Ի տարբերություն քրիստոնեական բարոյականության, որում որպես հիմնային առաքինություններ ընդունվում են հնազանդությունը, հեզությունը, ներողամտությունը և այլն, հնդկահայ լուսավորիչները կարևորում են մարդու մոտ այնպիսի գծեր, ինչպիսիք են հայրենասիրությունը, քաջությունը, խիզախությունը, թշնամու դեմ անվախ պայքարը և այլն։ Նրանք բարոյական են համարում անհատի այն գործունեությունը, որն օգուտ է բերում հասարակությանը, ազգին՝ քիչելով նրանց շահերից։ Այսպես, խոսելով Անգլիա մեկնելու իր առաքելության մասին, որը ոչ թե հարստությունն էր, այլ ուսում ստանալն ու այն ազգին ծառայացնելը, Էմիլը Ռուսաստանի դեսպան Վորոնցովի հետ ունեցած զրույցում նշում է. «Աշխատասեր, քաջ ու պարկեշտ այս մարդիկը (նկատի ունի հայերին - Գ. Մ.) շուտով պիտի ահարկու դառնան, բավական է, որ անոնց տրուէր հասկացողութեան լոյսը, որպեսզի կարենային իրական գործքով

⁶ Նույն տեղում, էջ 15։

⁷ «Յուվսեի Էմիլի կեանքն ու արկածները», էջ 197։

⁸ Մ. Լ. Մոնտեսքյո. *Персидские письма. Элиста, 1988, с. 155.*

⁹ Օ. Շահամիրյան, *Որոգայթ փառաց*, էջ 11։

ճանչնալ բարութիւնը»¹⁰: Հայ լուսավորիչ մտածողը ազգային ավանդական բնավորության դրական գծերի զարթոնքը կապում էր գիտելիքի, լուսավորության ձեռքբերման հետ: Հայերի քաջության մասին տեղյակ են նաև նրա թշնամիները, որոնք ամեն կերպ ձգտում են թույլ չտալ հայերին միաբանվելու: Նրանք, Մովսես Բաղրամյանի վկայությամբ, սովորություն ունեն աղոթքի մեջ Աստծուն խնդրելու, որ քրիստոնյաները չմիաբանվեն, «քանզի լավ գիտեն, որ մի հայ երիտասարդը կարող է հաղթել տաս կամ քսան այլազգիների»¹¹: Բաղրամյանը կոչ է անում վերականգնել պատմական հիշողությունը, քանի որ մեր մեջ կան շատերը, որոնք բնավ չեն մտաբերում կամ չեն էլ լսել մեր հսկաների, քաջերի և հաղթող թագավորների մասին: Քաջությունը՝ որպէս մարդկային որակ, պայմանավորված է կոնկրետ հանգամանքներով: Այնպես, ինչպես աշխարհն է փոփոխական, այդպես էլ փոփոխական է մարդու բնությունը: Հ. Էմինը քաջությունը համեմատում է ախորժակի հետ, որը երբեմն բացվում է, երբեմն փակվում՝ կապված մարմնի կենսաբանական պահանջմունքների փոփոխության հետ: «Քաջությունը, գրում է նա, ախորժակի նման է, երբեմն ներկայ, երբեմն բացակայ... Ես յաճախ հանդիպեմ եմ... նման դեպքերու, ուր սպաներ ու զինուորներ քաջաբար կարող էին դիմադրել առիծներու, մինչ ուրիշ ատեն կը սարսափեին»¹²: Ավելի խորացնելով այս միտքը՝ Ծ. Ծահամիրյանը նշում է, թե մարդու էության (բնության) կարգն այնպիսին է, որ նրա մեջ վախը, քաջությունը, սերը, թշնամությունը և այլ զգացմունքները հավիտենական լինել չեն կարող: Այն մերթ արթնանում, մերթ մարում է մարդու մեջ՝ ըստ այս աշխարհի և մեր բնության փոփոխականության»¹³: Քանի որ դա այդպես է, ուրեմն այն պետք է օգտագործել ազատագրական խնդիրները լուծելու ժամանակ: Ծ. Ծահամիրյանը գրում է. «Եթե ինքնակալ տերերին (նկատի ունի նաև օտարի տիրապետությունը - Գ. Մ.) հնազանդվողները երկյուղի պատճառով շարունակեն մնալ հնազանդության մեջ, ապա հպատակի գիտակցության մեջ օրավոր թուլանալու է իրենց իշխանից ունեցած նրանց վախը և օրավոր ամրանալու է հնազանդվողների սիրտը»¹⁴: Այս փոփոխականությունը հասկանալու դեպքում կարելի է այն օգտագործել ազգային խնդիրները լուծելիս:

Հայ լուսավորիչները հայ ազգի բնավորության գծերից մեկն էլ համարում են տաքարյունությունը: Դրա պատճառը նրանք համարում են երկրի ճակատագիրը, բնակության դիրքը (նկատի ունեն աշխարհագրական միջավայրը և բնակլիմայական պայմանները), որոնց ազդեցությամբ ձևավորվում է ազգային խառնվածքը: Նկատելի է, որ ազգային բնավորության գծերի առանձնահատկությունները հայ լուսավորիչները բացատրում են առաջին հերթին արտաքին հանգամանքներով, որը, ինչ խոսք, «աշխարհագրական դետերմինիզմի» տեսության դրսևորումներից մեկն է հայ տեսական մտքի պատմության մեջ: Այդ տեսության խոշոր ներկայացուցիչ Մոնտեսքյուն ուղղակի կապ էր տեսնում ազգի խառնվածքի ու բնակլիմայական պայմանների միջև: Նա համոզված էր, որ օդը, բույսերը, որոնք հագեցած են հողի բաղադրամասերով, այն աստիճան են ազդում մեզ վրա, որ պայմանավորում են մեր խառնվածքը¹⁵: Ուշագրավ է, որ Մ. Բաղրամյանը, Մոնտեսքյունի նմանությամբ, մեր ժողովրդի տաքարյուն բնավորությունը բխեցնում էր Հայաստան աշխարհի բնակլիմայական պայմաններից: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Մ. Բաղրամյանը գրում է. «Մեր մայր հողի բնակիչները չափազանց տաքարյուն են, որի պատճառը կամ մեր երկրի ճակատագիրն

¹⁰ «Յովսեփի Էմինի կեանքն ու արկածները», էջ 212:

¹¹ Մ. Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչի հորդորակ, թարգմ. Պ. Խաչատրյանի, Եր., 1991, էջ 157:

¹² «Յովսեփի Էմինի կեանքն ու արկածները», էջ 343:

¹³ Ծ. Ծահամիրյան, Որոգայթ փառաց, էջ 40:

¹⁴ Նույն տեղում, էջ 40-41:

¹⁵ Տե՛ս Ա. Մ. Մոնտեսքյո, նշվ. աշխ., էջ 212:

է, կամ թե չէ ամեն մեկի բնակավայրը, որոնցից և ձևավորվում է խառնվածքը»¹⁶։

Նա համոզված էր, որ եթե խառնվածքի այդ գիծը լրացվի լուսավորությամբ ու կրթությամբ, ապա այն դրական դեր կխաղա ազգի ազատագրման գործում։

Հայ լուսավորիչները ազգային բնավորության ավանդական դրական գծերի վերլուծության հետ միասին, որոնք, ի դեպ, շահեկանորեն նպաստել են ազգային զարթոնքին, քննում են նաև ազգային բնավորության գծերի մեջ նկատվող խեղաձևման պատճառների ու դրանց վերացման ուղիների հարցը։ Այդ ձևախեղման հիմնական պատճառը նրանք տեսնում են ինքնիշխանության վերացման, պետականության կորստյան մեջ։ «Մեր իշխանության վերացումով մեզանից վերացան բոլոր վայելչությունները», - նկատում է Մ. Բաղրամյանը։ Օտարի բռնիշխանությունը փոխում է հպատակ ազգի բնավորության գծերը։ Եվրոպական լուսավորիչների նման հնդկահայ լուսավորիչները ևս մարդուն դիտում էին որպես միջավայրի դաստիարակության արդյունք։ Ինչպիսին միջավայրն է, այնպիսին էլ մարդն է։ Այս միտքը, մասնավորապես, պաշտպանում էր Հելվեցիուսը, երբ գրում էր. «Փորձը ցույց է տալիս, որ ժողովուրդների բնույթը և միտքը փոփոխվում են կառավարման ձևի հետ միասին, որ կառավարման տարբեր ձևերը միևնույն ազգին հաջորդաբար տալիս են մերթ բարձր, մերթ ընկճված, մերթ կայուն, մերթ փոփոխական, մերթ առնական, մերթ խոնարհ բնույթ»¹⁷։ Նկատելի է, որ լուսավորիչ մտածողները մարդու գործունեության մեջ վարքի, բարոյական նորմերի ու օրենքների բնույթը պայմանավորում էին ժամանակի պատմական հանգամանքներով, սոցիալական միջավայրով։ Հնդկահայ լուսավորիչները դրանցով էին պայմանավորում, օրինակ, այնպիսի գծերի ձևավորումը, ինչպիսիք են դրամամոլությունը և նախապաշարմունքների առկայությունը։ Էմիլը վստահ է, որ այդ գծերը կարող են խանգարել, որպեսզի հայ ազգը դառնա հիրավի մեծ ազգ։ Բացի դա, նախապաշարմունքները և հարստությունն դիզելու բուռն կիրքը խանգարում են նրանց ազատության ու ազատության ձեռքբերման գիտակցմանը։ «Եթե հայ վաճառականները ազատութեան հանդէպ ունենային կէսն այն նւիրման, զոր անոնք կը տածեն հանդէպ դրամին ու նախապաշարմանց, որոնք այնքան քայքայիչ են քանի՜ քանի՜ տեսակետներով - անոնք շատոնց է որ ազատուած պիտի ըլլային,- գրում է Էմիլը, ապա շարունակում,- անոնք իսկապէս չեն գիտեր թէ ինչ է ազատութիւնը։ Եթէ միայն անգամ մը կարենային ճաշակել անոր քաղցրութիւնը, եւ կարենային իրենց բարի սրտերէն դուրս վտարել այս պատաւական առասպելները, անտարակոյս որ պիտի կրնային մեծ ազգ մը դառնալ»¹⁸։ Պետք է պատռել նախախնամության մտայն վարագույրը և իրերի մասին ունենալ ճիշտ պատկերացում։ Ընդ որում, Էմիլը նշում է, որ ինքը նպատակ չունի նախատել կամ դժգոհել, այլ միայն ազգի բարօրության շահերից ելնելով՝ «արթնացնել զանոնք իրենց անմեղ թմրութենէն»¹⁹։ Նախապաշարմունքի ամրացման, տգիտության ու մտքի թմրության հաստատման մեջ Էմիլը հիմնական տեղը հատկացնում է հայ հոգևորականության որոշ մասին։ Դիմելով նրանց՝ քրիստոնյա Էմիլը գրում է. «Օ՛ եկեղեցականներ, եթէ դուք թոյլ տաք միայն, որ անոնք խորտակեն նախապաշարմանց ու տգիտութեան շղթաները, դուք պիտի տեսնէք թէ անոնք որպիսի արութեամբ պիտի յարձակին Քրիստոսի թշնամիներուն դէմ»²⁰։ Ո՞րն է վիճակից դուրս գալու ելքը։ Հայ ազգի պոտենցիալ կարողություններին հավատալով՝ Մ. Բաղրամյանը խորհում է. «Մի՞թե մեկը, որ խոնարհվեց ու տապալվեց,

¹⁶ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 52։

¹⁷ К. А. Гельвеций. О человеке, его умственных способностях и его воспитании. М., 1933, с.145.

¹⁸ «Յովսէփ Էմիլի կեանքն ու արկածները», էջ 222-223։

¹⁹ Նույն տեղում, էջ 223։

²⁰ Նույն տեղում, էջ 327։

այլևս չի ակնկալի դարձյալ հատնել, կամ վիրավորն ու հիվանդը փրկության հույս չեն փայփայի: Չէ՞ որ միշտ էլ տրտմությանը և թախիծին ուրախությունն է հաջորդում»²¹: Պարզապես պետք է վերագտնել սեփական ուժերի նկատմամբ հավատը: Այն ազգերը, որոնք դա չկարողացան անել, կործանվեցին, իսկ նրանք, որոնք իրենց մեջ ուժ գտան հաղթահարելու սեփական թերություններն ու սխալները, նորից վերակենդանացան, ազատագրվեցին օտարի լծից, ձեռք բերեցին ազատություն: Մ. Բաղրամյանը նկատի ունի նոր ժամանակներում Իսպանիայի ու Պորտուգալիայի ժողովուրդներին, որոնք, 11-15-րդ դարերում մավրերի դեմ պայքարելով, վերականգնեցին պետականությունը: Մ. Բաղրամյանը նրանց պետականության վերականգնումը կապում է ոչ թե հրաշքի կամ ուրիշների աջակցության ու օգնության, այլ սեփական ուժի ու արիության հետ: Ոչ մի ազգ իր ազատությունը պահելու համար մղած պատերազմում չի նվազում: Այս կապակցությամբ նա բերում է ռուս ազգի օրինակը, որը, նրա բնորոշմամբ, ժամանակին «այնքան նվաստագույն էր», սակայն «ինքն իրեն ազատելով դրացիների հալածանքից՝ կարողացավ նույնիսկ դառնալ աշխարհակալ»²²: Նա խորհուրդ է տալիս թշնամուց չվախենալ, այլ հայ մեծ նախնիների օրինակին հետևելով՝ համախմբված ու միաբան ձեռք բերեն ազատություն, այլ ոչ թե կենդանի վիճակում ննջեն իբրև մեռած²³: Նույն միտքն է պաշտպանում նաև Օ. Շահամիրյանը, երբ գրում է, թե «այսուհետև երբեք հույս չենք դնի ուրիշի վրա՝ ոչ արյունակցի անկեղծության, ոչ պետության ու զորավոր գնդերի, ոչ էլ երկրային որևէ արարածի վրա...»²⁴: Մարդու հոգեկան կերտվածքի ու բնավորության բացասական գծերից մեկը հայ լուսավորիչները համարում են ծուլությունը և անշարժությունը: Դրանք բացասաբար են անդրադառնում ազգի վիճակի վրա, արգելակում կամքի, գործողության ազատության և անձնական նախաձեռնության դրսևորումը: Մ. Բաղրամյանը դրանում է տեսնում նաև ազգի հարստության և ունեցվածքի կորստի պատճառը: Մի՞նչդեռ պատմության փորձը ցույց է տալիս, որ «վերստին շատ դժվար է ետ ստանալ այն, ինչ անցել է ուրիշին»²⁵: Ահա թե ինչու «ծուլության թմբիրից արթնանալու» կոչ անող հնդկահայ լուսավորիչները այն հասկանում էին ոչ միայն ուղղակի, այլև փոխաբերական իմաստով. այն է՝ անշարժությունից, անտարբերությունից ձերբազատվելը, սեփական կարողություններին ապավինելը, անկախ ու հզոր հայրենիք ստեղծելու ուղղությամբ գործնական քայլեր կատարելու անհրաժեշտությունը: «Քննադատելով «վնասակար ու հոռի» ծուլությունը՝ Օ. Շահամիրյանը ևս նկատում է, որ հայ ազգը պետք է գիտակցի այն անհուն վճարը, որ եկավ Հայոց աշխարհի ու ազգի վրա ինքնակալ թագավորության և ինքնակալ իշխանության պատճառով և կամայական արարքների հետևանքով²⁶: Լուսավորիչ մտածողները այդ ամենի պատճառը կապում են միապետական կարգերի, դրանից բխող բոլոր բացասական հետևանքների հետ:

Հայոց ազգի դժբախտության պատճառներից մեկը Օ. Շահամիրյանը համարում է այն, որ իմանալով մեր ազատությունը պահպանելու հնարը (եղանակը)՝ այն չիրագործեցինք: Ավելին, սովորություն դարձրինք ամեն տեսակ անկարգ գործերն ու արարքները և մեզ դատապարտելով՝ ասացինք, որ այդ ամենի պատճառը մեր կատարած մեղքերն էին: Իրոք, նկատում է Օ. Շահամիրյանը, մեր բոլոր պակասություններն ու նեղությունները՝ անտերությունը, թշվառությունը, պանդխտությունը, գերությունը, աղքատությունը և այլն, բոլորը մեր մեղքերի

²¹ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 30:

²² Նույն տեղում, էջ 37:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

²⁴ Օ. Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 58:

²⁵ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 21:

²⁶ Տե՛ս Օ. Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 13:

պատճառով են: Սակայն մեղքերը կարող են լինել սովորական և մահացու: Մեր բոլոր մեղքերից «ամենածայրահեղ ու սաստկագույն մեղքը ծուլությունն է (ընդ-գծումն իմն է - Գ. Մ.), որով և գոյանում են համայն մահացու մեղքերը»²⁷: Ինչպես տեսնում ենք, հնդկահայ լուսավորիչները հատուկ մերժողական վերաբերմունք ունեն մարդկային այս բացասական գծի նկատմամբ: Խնդրո առարկա հարցի կա-պակցությամբ հայ մտածողները մտահոգված են նաև ազգային արժանապատ-վության նկատվող կորստյան զգացման համար: Նրանց համար վիրավորական է, թե ինչպես են այլազգիները իրենց կոչում գյավոր (անհավատ) մականունով: Այս կապակցությամբ Հակոբ Ծափամիրյանի տպարանում լույս տեսած Հանուեի «Պատմագրություն վարուց և գործոց Նադր շահ թագաւորին Պարսից» գրքի թարգմանության վերջում կցված հիշատակարանի հեղինակը (որը, ըստ Պ. Խա-չատրյանի, ամենայն հավանականությամբ Եղիազար Ծափամիրյանն է²⁸ գրում. «...փոխանակ քաղցր և արժանատր պատունն առ ի լսելոյ զանուն մեր՝ անդրա-դարձը լսեմք ի տիրապետողացէ մերմէ (դիմնուզ, գատուն), որ զայս անուամբ ար-ժանի համարեցան զմեզ կոչել այսօր»²⁹: Բայց հայոց ազգը ունի նույն բնությունը, ինչպես որ ազատ ու երջանիկ վիճակում գտնվող մյուս ազգերը: Հետևապես, մեր թշվառ վիճակի պատճառը համարելով ծուլությունը, Ծ. Ծափամիրյանը համոզ-ված է, որ «մինչև չհաստատվի կարգ ու օրենք, կարգ ու կանոն, ծուլությունը մեզ-նից չի վերանա և թույլ չի տա փայլելու մեր ազգին»³⁰: Նկատելի է, որ հայ լուսա-վորիչ մտածողները հակված են ենթադրելու, որ հայոց ազգային նկարագրին շատ է վնասել սեփական օրենքներ ու կարգ չունենալու հանգամանքը: Ծ. Ծափ-ամիրյանը, օրինակ, հավատացած է, որ այդ անկարգ ու անօրեն վիճակի պատճա-ռով այնքան շատ վնաս ու ավերածություն է հասցվել հայ ազգին, որ վնասի որ-չափությունը ոչ ոք չի կարող ներկայացնել: «Մեր անկարգության պատճառով,- գրում է նա,- մեր հարևանները չորս կողմից հրամայեցին մեզ, ինչ որ կամեցան, իսկ մենք, չգիտակցելով ու չճանաչելով մեր ազատության պատիվը, ենթարկվե-ցինք նրանց»³¹: Հայ լուսավորիչները համոզված էին, որ դրա պատճառներից մե-կը, թերևս ամենազլխավորը, այն է, որ դարեր շարունակ հայ ազգը, գտնվելով օ-տար լծի տակ, ենթարկվել է նաև օտարների կարգերին ու օրենքներին: Ազգը պարտադրված է եղել ապրելու ուրիշի մշակած ու հաստատած օրենքներով, իր տնտեսական, քաղաքական ու հոգևոր կյանքը հարմարեցնելու այլ մշակութային միջավայր ունեցող ազգի օրենքներին: Իսկ այդ մշակութային միջավայրը հայ ազգի համեմատությամբ ուներ զարգացման անհամեմատ ավելի ցածր մակար-դակ: Այն հանգամանքը, որ հայ ազգը երկար ժամանակ գտնվում էր օտարի լծի տակ, մղել է ապրելու ծառայական կյանքով: Իսկ «երկարատև ժամանակով ամեն մի սովորույթ կարող է վերածվել մարդու բնավորության», - հավատացած է Ծ. Ծափամիրյանը³²: Հպատակի կյանքը, անտերունչ լինելը, հայոց կրթարանների ու ուսումնական հաստատությունների խափանումը առիթ դարձան, որ մեր լեզվին ևս խառնվի օտարի բառապաշարը, մոռացվի մեր պատմության իմացումն ու ըն-թերցումը: Հնդկահայ լուսավորիչները հավատացած էին, որ այդ անբարեն-պաստ մշակութային միջավայրը պատճառ դարձավ, որ հայ մարդը ծանոթ չլինի իր ազգի անցյալ երջանկությանն ու ազատությանը: Ծափամիրյանը հավա-տացած է, որ հարյուր հայ մարդու մեջ հազիվ մեկ մարդ գտնվի, որ որևէ մեկի բե-րանից լսած լինի, թե հայոց ազգը ժամանակին տեր ու թագավոր էր Հայաստան

²⁷ Նույն տեղում, էջ 53:

²⁸ Տե՛ս նույն տեղը, ծան. 81, էջ 262:

²⁹ Մեջ է բերվում ըստ Ն. Ոսկանյանի, Ք. Կորկոտյանի, Ա. Սավայանի «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» աշխատության, Եր., 1988, 526 բ:

³⁰ Ծ. Ծափամիրյան, նշվ. աշխ., էջ 54:

³¹ Նույն տեղում, էջ 31:

³² Նույն տեղում, էջ 64:

երկրում³³: Դա է պատճառը, որ Հ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Օ. Շահամիրյանը, մյուսները ամեն կերպ փորձում էին գրավոր և բանավոր միջոցներով հայ ազգին ծանոթացնել հայոց պատմության հերոսական անցյալին, պատկերացում տալ երկրի աշխարհագրական ու բնակլիմայական պայմանների մասին:

Մ. Բաղրամյանը հոգեկան կերտվածքի ձևախեղման ոչ պակաս կարևոր պատճառ համարում է հայ ազգի մեջ նկատվող ուսումնաստյացությունը: Ըստ Բաղրամյանի, ազգի տառապանքների հիմնական պատճառը ուսման, կրթության պակասությունն է, որը ծնում է վիշտ ու տառապանք: «Այլարկոտ ու անբան ազգը դատապարտված է սարսափի», - հավատացած է Մ. Բաղրամյանը³⁴: Նշելով, որ ժամանակին բազմածնունդ սերունդներով, այլազգիների մեջ ծիրանագեատ թագուհու նմանվող հայոց ազգը խիստ նեղվել ու սեղմվել է, ընկել անելանելի տառապանքի մեջ, Բաղրամյանը վստահեցնում է, որ ազգը պետք է գիտակցի, որ ամոթ ու անպատվություն է անարգանքներ տանելը, ազատության կորուստը: Հապաղելը, ժամանակ կորցնելը, ըստ Բաղրամյանի, հասցրել են նրան, որ թուլացել են ազգի կենսական ուժերը, փոքրացել նրա կարողությունները: Պատկերավոր համեմատությամբ նա գրում է. «Ինչպես մարմին մի անզուլխ, որ փոկել է գետնի վրա դիաթավալ ու դիապատ, այդպես էլ ազգ մեր որքա՛ն ժամանակներ մնացել է երեսնիվայր ու անտերունչ»³⁵: Ազգը կարող է ազգ մնալ ուժով ու հզորությամբ, հակառակ դեպքում դատապարտված է: Բաղրամյանը հավատացած է, որ հայ ազգը դարձել է արհամարհված անուն, քանի որ «ստրուկի պես ընկել, դարձել ենք հպատակ օտարազգի իշխանության» և ինչպես ստորացած գերի՝ «համարվում ենք նվաստագույնն ու անպիտանը բովանդակ ազգերի մեջ»³⁶: Նույն կերպ Օ. Շահամիրյանը ևս, ազգի հոգեկան կերտվածքի մեջ կարևորելով ազատության պատվի գիտակցումն ու ճանաչումը, նշում է, որ մեր ստրկական վիճակը «մեր հեզության պատճառով էր»³⁷: Ծարունակելով Եղիշեհի եկող ավանդույթները՝ հնդկահայ լուսավորիչները ևս ազատության մեջ կարևորում են հերոսության և անձնագործության, ինչպես և դրանց բանական գիտակցման դերը: «Ավելի լավ կլինե՞ր, - գրում է Մ. Բաղրամյանը, - եթե ազգի մի մասը իր կյանքը տար հանուն ազգի, որպեսզի ազգը փարթամած ու ճոխացած, կարողանար ըստ փափազի ազատ-արձակ պայծառանալ, ... քան այդպիսի տառապանքով ու խեղճությամբ ազգն ընդհանուր ծառայության դատապարտեր»³⁸: Օ. Շահամիրյանը ևս համոզված է, թե ավելի լավ է «մեռնել ազատ...քան թե անկարգ ու ծառայական վիճակով ապրել», «մեռնել...քան թե անօրեն կյանքով միշտ մնալ նախատինքի մեջ»³⁹:

Հայրենասեր հեղինակները փորձում են ազգի առկա վիճակի ու նրա հոգևոր կերտվածքի մեջ դարձյալ վերականգնել հերոսությունը, ճոխությունը, հարստությունը (ընդգծումն իմն է - Գ. Մ.): Իսկ դրան նորից հասնելու համար Բաղրամյանը կարևորում է ազգի կողմից թշվառությունը, տառապանքը, ի վերջո՝ ազատությունը գիտակցել կարողանալու ձգտումը: Չարը, զրկանքը, սիրո պակասը ազգի համախմբման ու միասնության գործում արգելակիչ գործոններ են: Ազգի միասնության ու համախմբման գործում մեծ է հաշտության ու սիրո զգացումի նշանակությունը: Մ. Բաղրամյանը ազգային-ազատագրական պայքարի, առաջին հերթին առանձին մարդու ազատության ու բարօրության խնդիրների լուծման համար

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 65:

³⁴ Նույն տեղում, էջ 11:

³⁵ Նույն տեղում, էջ 14:

³⁶ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 15:

³⁷ Օ. Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 31:

³⁸ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 36:

³⁹ Օ. Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 32, 37:

կարևոր է համարում այնպիսի հավաքական գիծ, ինչպիսին է միաբանությունը: Ըստ նրա, դրա հիմքում ընկած է սերը, որն «ամենայն առաքիճությունների մայրն ու թագուհին է», ինչպես նաև՝ համերաշխությունն ու համախոհությունը: Դրան հակառակ, լուսավորիչները հավատացած էին, որ **նախանձը, ատելությունը** կարող են դառնալ միայն միջանձնային և ազգամիջյան հարաբերությունների անկայունության պատճառ: «Ատելությունը և նախանձը պետք է արմատախիլ անել,- գրում է Մ. Բաղրամյանը,- քանի որ իրար նախանձելով՝ անվերջ ձգտում ենք միմյանց խորտակելու»⁴⁰: Բաղրամյանը փորձում է տեսականորեն հիմնավորել, որ ազգի հզորությունը կախված չէ քանակից: Ավելին, ըստ նրա, փոքրաքանակ ազգը եթե կուտ է, համերաշխ՝ ավելի հզոր է, քան մեծաքանակ ազգը, որը չունի այդ առաքիճությունը: «Ինչպես, որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի գորություն և ուժ է լինում, քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե աներ ու անմիաբան մեծ ազգը,- գրում է Մ. Բաղրամյանը⁴¹: Լուսավորիչ մտածողը հայ ազգի թշվառ վիճակը տեսնում է ատելության ու անմիաբանության դրսևորման մեջ և եզրակացնում, թե քանի դեռ «մենք նախապես չջանանք իրար հետ սիրո և դաշինքի մեջ լինել, չենք կարող հասնել մեր ազատությանը»⁴²: Մ. Բաղրամյանը հասարակության հոգևոր կերտվածքի վերականգնման գործում կարևորում է ազգի բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտի առկայությունը: Վերջինիս ձևավորման գործում հայ լուսավորիչը կարևոր տեղ է հատկացնում ամեն մեկի կողմից իր «դիրքի ու չափի», այսինքն՝ սոցիալական դերի գիտակցմանը: Հարկ է, որպեսզի լսեն իմաստունի և գիտունի խոսքը, ունկնդրեն վարդապետի ու ուսուցչի խրատները: Այսօր էլ խիստ արդիական են հնդկահայ լուսավորչի մտքերն այն մասին, որ պետք է պատվել և մեծարել հանճարեղ ու իմաստուն մարդկանց, պետք է «համակրել ու դրվատել արհեստավոր վարպետներին և բանիբուն գիտուններին», պետք է տիրապետել «կիրառական ուսմունքներին և հար վարժվել մարմնամարզի ձևերի մեջ»⁴³: Դրանով ազգը դուրս կգա անշարժության պատճառով ստեղծված անկարգության վիճակից և կնմանվի առաջավոր ազգերին: Ինչպես տեսնում ենք, Էմինը, Բաղրամյանը, Ծախամիրյանը շարժման, հասարակական առաջադիմության կողմնակիցներ են, որի անբաժան մաս փորձում են տեսնել նաև հայ ազգին: Իսկ մինչ այդ, որպես առաջնահերթ խնդիր, ազատության ու պետականության վերականգնման արդարացի պահանջն էր: Հետևապես, ինչպես Օ. Ծախամիրյանն է գրում, «ջանալ ու չարչարանք թափել ստանալու համար այն, որ հայոց սեփական ժառանգությունն է, անարդարություն չէ, այլ արդարություն»⁴⁴: Հայ ազգի բարոյական կերպարի մեջ առանձնացնելով նաև արդարամտությունը՝ հայ մտածողները փորձում են մեկ անգամ ևս շեշտել, որ հանուն ազատագրման իրենց մղած պայքարը ևս արդարացի է:

Այսպիսով, հնդկահայ լուսավորիչները հայերի ազգային նկարագրի, նրա բնավորության գծերի մեջ առանձնացնում են գծեր, որոնք կարող են շահեկանորեն օգտակար լինել ազգային-ազատագրական պայքարը հաջողությամբ ավարտելու և ազատությունն ու պետականությունը վերականգնելու գործում: Միաժամանակ նրանք ձգտում են ազգի ուշադրությունը սևեռել բնավորության այն գծերի վրա, որոնք կարող են խանգարել այդ նվիրական ցանկությունների իրականացմանը: Դարի մտածողությանը համահունչ՝ հնդկահայ լուսավորիչները

⁴⁰ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 53:

⁴¹ Նույն տեղում, էջ 104:

⁴² Նույն տեղում, էջ 104:

⁴³ Նույն տեղում, էջ 40:

⁴⁴ Օ. Ծախամիրյան, նշվ. աշխ., էջ 73:

ազգային բնավորության ու խառնվածքի լավագույն գծերի վերականգնումը, նրանում նկատվող բացասական դրսևորումների հաղթահարման ուղիները, հայ ազգի ազատագրման ու բարգավաճման ճանապարհը տեսնում էին ճորտատիրության ու բռնակալության վերացման, իրավական հավասարության հիմքի վրա քաղաքացիական ազատությունների ապահովման, լուսավորության տարածման, մշակույթի հետ լայն զանգվածների շփման, քաղաքակիրթ օրենքների առկայության և այլ գործոնների մեջ:

Г. А. МЕЛКУМЯН - *Индийские армяне-просветители о национальном характере.* - В статье освещены представления индийских армян-просветителей второй половины XVIII века о специфических чертах национального характера. Показано, что ими выделяются в армянском национальном типе, характере черты, целесообразно, полезно используемые для достижения успеха в национально-освободительной борьбе, обретения свободы и восстановления государственности. Вместе с тем освещаются причины проступающих в национальном характере искажений и пути преодоления таковых.